ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2017 թվականի N1116 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. «Մեղրի» ազատ տնտեսական գոտուն առնչվող համագործակցության հեռանկարները Իրանի Իսլամական Հանրապետության «Արաս» ազատ տնտեսական գոտու ղեկավարության հետ քննարկելու նպատակով 2017 թվականի սեպտեմբերի 15-17-ը Իրանի Իսլամական Հանրապետություն (Ջուլֆա) պատվիրակության անդամների՝ համաձայն հավելվածի, գործուղման հետ կապված ծախսերը կատարել՝

1) Սուրեն Կարայանինը, Արմեն Այվազյանինը, Աննա Օհանյանինը, Արման Աբրահամյանինը, Արտեմ Դավթյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին.

2) Գրիգոր Մելքոնյանինը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

2. Ընդունել ի գիտություն, որ Արթուր Բաղալյանի՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Ջուլֆա) գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության՝ գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին՝ եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել Իրանի Իսլամական Հանրապետություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 3
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2017 թ.
հոկտեմբերի 3 -ի N 1116 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-17-Ը ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Ս. Կարայան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար (պատվիրակության ղեկավար)
Ա. Այվազյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի միջազգային տնտեսական համագործակցության վարչության պետ
Ա. Օհանյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի մամլո քարտուղար
Ա. Աբրահամյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արարողակարգի պատասխանատու
Գ. Մելքոնյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի սահմանակից երկրների վարչության խորհրդական
Ա. Բաղալյան	- «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Դավթյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ